Հավելված N 2
ՀՀ վարչապետի 2018 թ.
սեպտեմբերի 19 -ի N 1230 - Ն որոշման

Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1.Անունը, ազգանունը.

Արսեն Թորոսյան

Լենա Նանուշյան

Ալինա Նիկողոսյան

2. Զբաղեցրած պաշտոնը.

ՀՀ առողջապահության նախարար

ՀՀ առողջապահության նախարարի տեղակալ

ՀՀ առողջապահության նախարարի մամուլի քարտուղար

3. Գործուղման վայրը և ժամկետները.

Շվեյցարիայի Համադաշնություն (Ժնև), 2019 թվական, մայիսի 19-22-ը

4. Հրավիրող կողմը.

Առողջապահության համաշխարհային կազմակերպություն

5. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).

Մասնակցություն Առողջապահության համաշխարհային 72-րդ վեհաժողովին:

Վեհաժողովի գլխավոր քննարկումը կրում էր «Համընդհանուր առողջապահական ծածկույթ. ոչ ոք չպետք է անտեսվի» խորագիրը:

Հիմնական նպատակն ուղղված էր ընդգծելու համընդհանուր առողջապահական ծածկույթի կարևորությունը:

6. Քննարկված թեմաները.

Միջոցառմանը հրավիրված էին մասնակցելու ԱՀԿ անդամ-պետությունների բարձրաստիճան պաշտոնյաներ, նախարարներ, դեսպաններ, միջազգային կառույցների և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Վեհաժողովին քննարկվեցին նաև ԱՀԿ 2020-2021թթ. ֆինանսական բյուջեն, հանրային առողջապահությանը, միջազգային առողջապահական կանոնակարգերին, կայուն զարգացման ծրագրերի իրականացմանը, համընդհանուր առողջապահական ծածկույթին, դեղերին և պատվաստանյութերին, տուրբերկուլոզի վերացմանը, ոչ վարակիչ հիվանդությունների վերահսկմանն ու կանխարգելմանը, միգրանտների առողջության խթանմանը, մոր և մանկան առողջության պահպանմանն ուղղված և մի շարք այլ կարևոր համաշխարհային հնչեղություն ունեցող հարցեր:

ԱՀԿ եվրոպական տարածաշրջանի անդամ-պետությունների բարձրաստիճան ներկայացուցիչները և տեխնիկական փորձագետները ներկայացրեցին իրենց փորձը վերոնշյալ հարցերի ուղղությամբ: Քննարկվեցին նման հաջող փորձերի իրականացման հնարավորություններն այլ երկրներում:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Համընդհանուր առողջապահական ծածկույթի ապահովման և, հատկապես, առողջապահական պետական բյուջեի էական աճի ու առողջության ապահովագրության ներդրման Հայաստանի կողմից իրականացվող քայլերի վերաբերյալ զեկույցով հանդես եկավ ՀՀ առողջապահության նախարար Արսեն Թորոսյանը:

Ներկայացվեցին նշված ոլորտում Հայաստանի կողմից իրականացված աշխատանքները, հաջողություններն ու հետագա քայլերը: Շեշտադրվեց փոխօգնության միջոցով համագործակցության իրականացման կարևորությունը:

Համաժողովին ներկայացվեցին զարգացող երկրների փորձն ու հեռանկարները համընդհանուր առողջապահական ծածկույթին հասնելու ուղղությամբ:

Նախարարը և պատվիրակության անդամները հանդիպումներ ունեցան Շվեյցարիայի համադաշնության ներքին գործերի կանցլերի, Բելառուսի, Լիտվայի, Լյուքսեմբուրգի, Կատարի, Ղազախստանի, Մոնակոյի, Մոնտենեգրոյի,

Ռուսաստանի, Սան-Մարինոյի, Տաջիկստանի, Ուզբեկստանի, Ուկրաինայի առողջապահության նախարարների հետ: Հանդիպում կայացավ նաև լորդ Արա Դարզիի հետ (Մեծ Բրիտանիա), ով Հայաստանին աջակցում է առողջապահական բարեփոխումների ընթացքում:

Քննարկվեցին երկկողմ համագործակցության հնարավոր ուղղությունները, մասնավորապես առողջապահական համընդհանուր ծածկույթին հասնելու, առողջության առաջնային պահպանման, վարակիչ ու ոչ վարակիչ հիվանդությունների, միմյանց պացիենտների բուժման ոլորտում համագործակցության հնարավորությունը: Զրույցներում հատուկ ընդգծվեց ԱՀԿ տարածաշրջանային տնօրենի պաշտոնում Հայաստանի կողմից առաջադրված թեկնածու Թաթուլ Հակոբյանին ԱՀԿ անդամ երկրների կողմից աջակցելու հնարավորության հարցը: Երկրներին հանգամանալից ներկայացվեցին ՀՀ ներկայացուցչի նախընտրական ծրագրերը:

Պատվիրակությունը մասնակցեց նաև ԱՀԿ եվրոպական տարածաշրջանի տնօրենի ընտրության հետ կապված առանձնացված քննարկումներին՝ երկրների մասնակցությամբ, որտեղ ներակայացվել էր Թաթուլ Հակոբյանի թեկնածությունը, և վերջինս ներկայացրել էր իր ծրագրերը, պատասխանելով երկրների հարցերին:

Մասնակցություններ եղան ԳԱՎԻ-ի, ՄԱԿ-ի ՁԻԱՀ-ի միացյալ ծրագրերի միջոցառումներին, որտեղ ՀՀ առողջապահության նախարարը ելույթ ունեցավ Հայաստանում տիրող իրավիճակի, ձեռքբերումների և խնդիրների մասին:

Նախարարը ՄԱԿ կայուն զարգացման նպատակների վերաբերյալ հարցազրույց է տվել ամերիկյան CNBC հեռուստաալիքին:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավոր-վածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Համաժողովը հնարավորություն ընձեռեց ծանոթանալու ԱՀԿ անդամ-պետությունների առաջավոր փորձին և ներկայիս աշխատանքին, ինչպես նաև ուրվագծելու հետագա համատեղ գործողությունները՝ միջազգային փորձագետների կողմից առաջարկվող ուղղություններով:

Տարբեր երկրների առողջապահության ոլորտի ներկայացուցիչների հետ քննարկվեցին հնարավոր համագործակցության ուղղություններն ու հեռանկարները, ԱՀԿ գլխավոր տնօրենի ընտրության հետ կապված հարցեր:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Առաջարկվեց պայմանավորված ուղղություններով ու կոնկրետ գործողություններով համատեղել երկրների ջանքերը և ակտիվացնել փոխգործակցությունը ոչ վարակիչ հիվանդությունների վերահսկման ու կանխարգելման ուղղությամբ: Պատվիրակության ջանքերի շնորհիվ լավագույնս ներկայացվեց ՀՀ ներկայացուցչի թեկնածությունը՝ ԱՀԿ տարածաշրջանային տնօրենի պաշտոնին:

10. Ստորագրությունը, ամսաթիվը:

X _____

2019թ. մայիսի 24